ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՏԱՇԱՐ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձի չափը
1	տնօրեն	1.0	150000	150000
2	մեթոդիստ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալ	0.5	140000	70000
3	դաստիարակ	2.34	120000	280800
4	դաստիարակի օգնական	2.0	110000	220000
5	բուժքույր	1.0	120000	120000
6	գլխավոր հաշվապահ	0.5	140000	70000
7	երաժշտության դաստիարակ (երաժշտական ղեկավար)	0.5	120000	60000
8	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.25	120000	30000
9	տնտեսվար	0.5	120000	60000
10	խոհարար	1.0	110000	110000
11	խոհարարի օգնական	0.5	105000	52500
12	լվացարար	0.5	105000	52500
13	պահակ	1.0	105000	105000
14	հավաքարար	0.5	105000	52500
15	օժանդակ բանվոր	0.5	105000	52500
ընդամենը		**12.59**	**1775000**	**1485800**

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ. Հովհաննիսյան**

Հավելված N26
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2026 թվականի նոյեմբերի 13-ի
N 243-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 68:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱ ՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
1	Տնօրեն	1,0	290000	0	290000
2	Փոխտնօրեն	1,0	160000	0	160000
3-11	Բնակավայրի մշակույթի տան պատասխանատու	9,0	125000	0	1125000
12	Մեթոդիստ	1,0	120000		120000
13-14	Գեղմասվար	2,0	125000	0	250000
15	Տնտեսվար	1,0	125000	0	125000
16	Հաշվապահ	1,0	175000	0	175000
17	Գանձապահ	1,0	105000	0	105000
18-23	Պարի ուսուցիչ	6,0	110000	0	660000
24-26	Կերպարվեստի ուսուցիչ	3,0	110000	0	330000
27-28	Ասեղնագործության ուսուցիչ	2,0	110000	0	220000
29	Դիզայներության ուսուցիչ	1,0	110000	0	110000
30-31	Դահլիճի պատասխանատու	2,0	105000	0	210000
32	Գործավար	1,0	125000	0	125000

33	Օպերատոր	0,5	110000	0	55000
34	Մեդիա օպերատոր	1,0	200000	0	200000
35-37	Հսկիչ	3,0	105000	0	315000
38	Փականագործ	1,0	105000	0	105000
39-44	Հավաքարար	6,0	105000	0	630000
45-47	Պահակ	3,0	105000	0	315000
	ԳՐԱԴԱՐԱՆ				
48	Ավագ գրադարանավար	1,0	125000	0	125000
49-68	Գրադարանավար	20,0	105000	0	2100000
	Ընդամենը	**67.5**	**2855000**	**0**	**7850000**

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ.Հովհաննիսյան**

Հավելված N27
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2026 թվականի նոյեմբերի 13-ի
N 243-Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	տնօրեն	1.0	170000	0	170000
2	հաշվապահ	1.0	110000	0	110000
3	քարտուղար-գործավար	1.0	105000	0	105000
4	շվիի ուսուցիչ	1.0	120000	0	120000
5-10	դաշնամուրի ուսուցիչ	6.0	110000	0	660000
11	վոկալի ուսուցիչ	3.0	110000	0	330000
12	սոլֆեջիոյի ուսուցիչ	1.0	110000	0	110000
13-14	դհոլի ուսուցիչ	2	110000	0	220000
15	կերպարվեստի ուսուցիչ	1.0	110000	0	110000
16	դուդուկի ուսուցիչ	1.0	120000	0	120000
17	կոնցերտմայս	1.0	110000	0	110000

	տեր				
18-19	քանոնի ուսուցիչ	2.0	120000	0	240000
20	հավաքարար	1.0	105000	0	105000
21	պահակ	1.0	105000	0	105000
22	տնտեսվար	1.0	105000	0	105000
23	պարի ուսուցիչ	1.0	105000	0	105000
Ընդամենը		**25.0**	**1 825 000**	**0**	**2 605 000**

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ.Հովհաննիսյան**

Հավելված N28
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2026 թվականի նոյեմբերի 13-ի
N 243-Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	տնօրեն	1	120000	0	120000
2	հաշվապահ	0.5	110000	0	55000
3	դաշնամուրի ուսուցչուհի, սոլֆեջոյի և երաժշտական գրականության ուսուցիչ	1	105000	0	105000
4	դաշնամուրի ուսուցչուհի	1	105000	0	105000
5	դաշնամուրի ուսուցչուհի	1	105000	0	105000
6	դաշնամուրի ուսուցչուհի	1	105000	0	105000
7	քանոնի ուսուցչուհի	1	105000	0	105000
8	դուդուկի ուսուցիչ	1	105000	0	105000
9	դհոլի ուսուցիչ	1	105000	0	105000
10	վոկալի ուսուցչուհի	1	105000	0	105000
11	հավաքարար	1	105000	0	105000
12	նվագակցող	1	105000	0	105000
13	տեսաբան	1	105000	0	105000
ընդամենը		**12.5**	**1385000**	**0**	**1330000**

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ. Հովհաննիսյան**

Հավելված N29
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2026 թվականի նոյեմբերի 13-ի
N 243-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	տնօրեն	1.0	290000	0	290000
2	փոխտնօրեն	1.0	155000	0	155000
3	ուսմասվար	1.0	130000	0	130000
4	հաշվապահ	1.0	175000	0	175000
5-6	բնակավայրերի դպրոցների պատասխանատու	2.0	130000	0	260000
7-17	դաշնամուրի ուսուցիչ	11.0	105000	0	1155000
18-19	ջութակի ուսուցիչ	2.0	105000	0	210000
20-22	դուդուկի շվիի ուսուցիչ	3.0	105000	0	315000
23-25	ուդի, քամանչաի քանոնի, թառի ուսուցիչ	3.0	105000	0	315000
26-29	դհոլի ուսուցիչ	4.0	105000	0	420000

30-32	վոկալի ուսուցիչ	3.0	105000	0	315000
33-35	սոլֆեջիոյի ուսուցիչ	3.0	105000	0	315000
36	երգչախումբ-սոլֆեջիոյի ուսուցիչ	1.0	105000	0	105000
37-39	կերպարվեստի ուսուցիչ	3.0	105000	0	315000
40-42	պարի ուսուցիչ	3.0	105000	0	315000
43-44	կիթառի ուսուցիչ	2.0	105000	0	210000
45	դասական կլառնետի ուսուցիչ	1.0	105000	0	105000
46-47	նվագակցող	2.0	105000	0	210000
48	դաշնամուր լարող	1.0	105000	0	105000
49-50	գործավար	2.0	105000	0	210000
51-52	տնտեսվար	1.5	105000	0	157500
53-57	հավաքարար	5.0	105000	0	525000
58-59	պահակ	2.0	105000	0	210000
ընդամենը		**58.5**	**2770000**	**0**	**6522500**

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ.Հովհաննիսյան**

Հավելված N30
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2026 թվականի նոյեմբերի 13-ի
N 243-Ա որոշման

«ՄԵԾԱՄՈՐԻ ՎԵՐԵԼՔ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. **Աշխատակիցների թվաքանակը՝ 19:**
2. **Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:**

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱ ՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
1	Տնօրեն	1.0	140000	0	140000
2	ադմինիստրատոր	1.0	105000	0	105000
3	հաշվապահ	1.0	105000	0	105000
4	հնչյունային օպերատոր	1.0	110000	0	110000
5	ձայնային օպերատոր	1.0	110000	0	110000
6	դերձակ	1.0	105000	0	105000
7	դեկորատոր	1.0	105000	0	105000
8	դիզայներ	1,0	105000	0	105000
9	հսկիչ	1.0	105000	0	155000
10-17	դերասան	8.0	110000	0	880000
18-19	հավաքարար	2.0	105000	0	210000
Ընդամենը		**19.0**	**1205000**	0	**2130000**

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ. Հովհաննիսյան**

Հավելված N31
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2026 թվականի նոյեմբերի 13-ի
N 248-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 29

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
1	Տնօրեն	1	250000	0	250000
2	Փոխտնօրեն	1	200000	0	200000
3	Ուսմասվար	1	135200	0	135200
4	մեթոդիստ	1	125000	0	125000
5	Հաշվապահ	1	125000	0	125000
6	Բուժքույր	1	125000	0	125000
7-8	Գործավար	2	125000	0	250000
9	Մարզիչ ֆուտբոլի	1	125000	0	125000
10	Մարզիչ թեթև աթլետիկայի	1	125000	0	125000
11	Մարզիչ բռնցքամարտի	1	125000	0	125000
12	Մարզիչ բասկետբոլի	1	125000	0	125000
13-14	Մարզիչ հունահռոմեական ըմբշամարտի	2	125000	0	250000

15-16	Հանդերձապահ	2	125000	0	250000
17	Շախմատի ուսուցիչ/մարզիչ	1	125000	0	125000
18	Հավաքարար	1	125000	0	125000
19	Մարզիչ կարատեի	1	125000	0	125000
20	Մարզիչ ձյուդոյի	1	125000	0	125000
21	Տնտեսվար	1	125000	0	125000
22-24	Պահակ	3	125000	0	375000
25-28	Հավաքարար	4	125000	0	500000
29	Այգեպան	1	125000	0	125000
Ընդամենը		29	2835200	0	3835200

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ. Հովհաննիսյան**

Հավելված N32
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2026 թվականի նոյեմբերի 13-ի
N 243-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 115

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱ ՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
1	Տնօրեն	1	400000	0	400000
2-4	Փոխտնօրեն	3	320000	0	960000
5-8	Տնօրենի օգնական	4	290000	0	1160000
9	Գլխավոր հաշվապահ	1	270000	0	270000
10	Հաշվապահի օգնական	1	160000	0	160000
11	Հաշվետար	1	150000	0	150000
12	Գանձապահ	1	140000	0	140000
13	Ճարտարագետ	1	250000	0	250000
14	Կադրերի տեսուչ	1	160000	0	160000
15	Պահեստապետ	1	190000	0	190000
16	Պահեստի աշխատող	1	110000	0	110000
17	Տնտեսվար	1	130000	0	130000
18-19	Գործավար	2	160000	0	320000
20-21	Հավաքարար	2	110000	0	220000
22-25	Պահակ	4	105000	0	420000
26-29	Հատուկ տեխնիկա սպասարկող	4	275000	0	1100000

	վարորդ				
30	Ավտո մեխանիկ	1	150000	0	150000
31	Բնակարանայի ն շահագործման ավագ օպերատոր	1	160000	0	160000
32	Բնակարանայի ն շահագործման օպերատոր	1	120000	0	120000
33	Հյուրանոցի պատասխանա տու	1	105500	0	105500
34	Հյուրանոցի Հավաքարար	1	105000	0	105000
	Ընդամենը	34	3860500		6780500
ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ					
35	Տեղամասի պետ	1	250000	0	250000
36-45	Բանվոր	10	145000	0	1450000
46-47	Վարորդ	2	145000	0	290000
	Ընդամենը	13	540000		1990000
ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ					
48	Տեղամասի պետ	1	230000	0	230000
49-50	Մեխանիկ	2	110000	0	220000
51-52	Էլ.եռակցող	2	180000	0	360000
53-55	Փականակագո րծ	3	140000	0	420000
56-69	Բանվոր	14	130000	0	1820000
70	Էլեկտրիկ	1	130000	0	130000
71-72	Վարորդ ինքնաթափի	2	175000	0	350000
73-76	Վարորդ	4	145000	0	580000

	Ընդամենը	29	1240000		4110000
ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ					
77-79	Խմբի ղեկավար	3	250000	0	750000
80-89	Բանվոր	10	135000	0	1350000
90-95	Այգեպան	6	135000	0	810000
96-97	Ջրվոր	2	105000	0	210000
	Ընդամենը	21	625000	0	3120000
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍ					
98-100	Էլեկտրիկ-հսկիչ	3	270000	0	810000
101-103	Էլեկտրիկ	3	180000	0	540000
104-105	Բանվոր	2	130000	0	260000
106-107	Վարորդ	2	150000	0	300000
	Ընդամենը	10	730000		1910000
ԳՅՈՒՂԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ					
108	Ուղության պետ 1	1	260000	0	260000
109	Ուղության պետ 2	1	260000	0	260000
110	Ուղության պետ 3	1	260000	0	260000
	Ընդամենը	3	780000		780000
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
111-112	Գերեզմանատ ան վերակացու	2	105000	0	210000
113-115	Գերեզմանատ ան պահակ	3	105000	0	315000
	Ընդամենը	5	210000		525000
ԸՆԴՀԱՆՈՒՐ		115	7985500		19215500

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ.Հովհաննիսյան**

Հավելված N33
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2026 թվականի նոյեմբերի 13-ի
N 243-Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. **Աշխատակիցների թվաքանակը՝ 70**

2. **Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
1	Տնօրեն	1.0	350000	0	350000
2	Տնօրենի տեղակալ	1.0	290000	0	290000
3	Գլխ.Հաշվապահ	1.0	270000	0	270000
4	Գլխ.էներգետիկ	1.0	250000	0	250000
5-6	Ինժեներ-մեխանիկ	2.0	220000	0	440000
7	էլեկտրիկ հսկիչ	1.0	180000	0	180000
8	կադրերի տեսուչ	1.0	155000	0	155000
9-11	գործավար	3.0	130000	0	390000
12	Հաշվետար	1.0	140000	0	140000
13-16	Փականագործ	4.0	180000	0	720000
17	Եռակցող	1.0	170000	0	170000
18	Հավաքարար	1.0	115000	0	115000

19-20	Բանվոր	2.0	150000	*0*	300000
21-47	նաստավար	27.0	105000	*0*	2835000
48-67	հսկիչ-հավաքագրող	20.0	135000	*0*	2700000
68	պահեստապետ	1	140000	*0*	140000
69	Քլորացման մասնագետ	1	180000	*0*	180000
70	Վարորդ	1	275000	*0*	275000
Ընդամենը		70.0	**3435000**		**9900000**

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ. Հովհաննիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2026 թվականի N 244-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն N1 հավելվածի:

2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական տարածքում տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն N2 հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2027 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ԱՇՈՏ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ

ՆԱՀԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՍՆՋՈՅԱՆ

ՏԱՏՅԱՆԱ ԴՈԲՈՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՂԻՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի նոյեմբերի 13
ք.Մեծամոր

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ավագանու
2026 թվականի նոյեմբերի 13-ի N244-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ 15000 ՀՀ դրամ.

- մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար (բացառությամբ ջերմոցների (ջերմատների) ու գյուղատնտեսական նպատակներով կառուցվող ջրավազանների)՝ 15000 ՀՀ դրամ.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար (բացառությամբ ջերմոցների (ջերմատների) ու գյուղատնտեսական նպատակներով կառուցվող ջրավազանների)՝ 30000 ՀՀ դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը.

-501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար բացառությամբ ջերմոցների (ջերմատների) ու գյուղատնտեսական նպատակներով կառուցվող ջրավազանների)՝ 100000 ՀՀ դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը.

-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար (բացառությամբ ջերմոցների (ջերմատների) ու գյուղատնտեսական նպատակներով կառուցվող ջրավազանների)՝ 200000 ՀՀ դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը.

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ (բացառությամբ ջերմոցների (ջերմատների) ու գյուղատնտեսական նպատակներով կառուցվող ջրավազանների)՝ 1000000 ՀՀ դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,գոտիականության գործակցի արտադրյալը:

- ջերմոցների (ջերմատների) ու գյուղատնտեսական նպատակներով կառուցվող ջրավազանների համար՝ 1 հա (10000 քառակուսի մետր) ընդհանուր մակերեսի հաշվով՝ 400 հազար դրամի, իսկ այլ մակերեսի դեպքում՝ 1 հա-ի (10000 քառակուսի մետրի) հաշվով՝ 400 հազար դրամ գումարի նկատմամբ համամասնորեն հաշվարկված գումարի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը:

Սույն ենթակետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք ընդունել Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

Բնակավայրը	Գոտի	Գոտիականության գործակից
Նորապատ, Ակնալիճ, Մրգաշատ, Բամբակաշատ, Ալաշկերտ, Արտաշար, Նոր Արմավիր, Վարդանաշեն, Այգեշատ, Արևիկ, Երասխահուն, Ջրաշեն, Արազափ, Մարգարա, Նալբանդյան, Արգավանդ, Հայկավան, Զարթոնք, Տանձուտ, Եղեգնուտ, Տարոնիկ, Փշատավան, Ջանֆիդա, Նոր Արտագերս, Արմավիր, Ամասիա, Նոր Կեսարիա, Շենավան	13-16	2.0
Գետաշեն, Բերքաշատ	17-20	1.0
Մեծամոր	9-12	3.0

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 ՀՀ դրամի և սույն ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10000 ՀՀ դրամի և սույն ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

ա. այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների՝) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը.
- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը.
- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը.
- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված՝ շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

3) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 ՀՀ դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն ենթակետի <<ա>> պարբերությամբ սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

4) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 ՀՀ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 ՀՀ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 ՀՀ դրամ.

8) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 ՀՀ դրամ.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 ՀՀ դրամ.

10) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

11) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 ՀՀ դրամ.

12) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 20000 ՀՀ դրամ.

13) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 ՀՀ դրամ.

14) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 ՀՀ դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 ՀՀ դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 ՀՀ դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 ՀՀ դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 ՀՀ դրամ.

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 ՀՀ դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 ՀՀ դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 ՀՀ դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 ՀՀ դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 ՀՀ դրամ.

15) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար 350 ՀՀ դրամ.

16) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների,խաղատների և բաղնիքների (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50000 ՀՀ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 ՀՀ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 ՀՀ դրամ,

դ. խաղատների համար՝ 500000 ՀՀ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 500000 ՀՀ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 150000 ՀՀ դրամ.

17) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 5000 ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 ՀՀ դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 20000 ՀՀ դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 50000 ՀՀ դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 1000 ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 ՀՀ դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 ՀՀ դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 25000 ՀՀ դրամ,

18) համայնքի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 5000 ՀՀ դրամ.

19) կենդանիների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 20000 ՀՀ դրամ.

20) կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 20000 ՀՀ դրամ.

21) կենդանիների բուծարանների և կացարանների գործունեության թույլտվությունների համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 ՀՀ դրամ.

22) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիսը մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 ՀՀ դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 ՀՀ դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 ՀՀ դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 ՀՀ դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% -ի չափով

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%- ի չափով.

23) Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլ), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ 100000 ՀՀ դրամ.

24) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 ՀՀ դրամ.

25) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000 ՀՀ դրամ.

26) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 ՀՀ դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 ՀՀ դրամ,

գ. 7 հա –ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 ՀՀ դրամ,
դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 ՀՀ դրամ:

27) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝
ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի, շոգեբաղնիքի և մերսման սրահի (բացառությամբ բուժական մերսման սրահների) համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 20000 ՀՀ դրամ,
բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 300000 ՀՀ դրամ,

28) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 25000 ՀՀ դրամ.

29) համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ 10000 հազար դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

30) համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ քաղաքային բնակավայրերում՝ 15000 ՀՀ դրամ, գյուղական բնակավայրերում՝ 5000 ՀՀ դրամ:

2. Սահմանել գոտիավորում համայնքի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի համար հետևյալ կերպ՝
Առաջին գոտի- քաղաքային բնակավայրեր
Երկրորդ գոտի-գյուղական բնակավայրեր
Երրորդ գոտի-սահմանամերձ բնակավայրեր

3. Սույն որոշման առաջին կետով սահմանված դրույքաչափերը (բացառությամբ սույն որոշման առաջին կետի հինգերորդ ենթակետի) հաշվարկել՝

Առաջին գոտի -1,0 գործակցի կիրառմամբ,
Երկրոդ գոտի -0,5 գործակցի կիրառմամբ
Երրորդ գոտի -0,3 գործակցի կիրառմամբ

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ. Հովհաննիսյան**

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2026 թվականի նոյեմբերի 13-ի N244 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Մեծամոր համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 ՀՀ դրամ.
2. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը,վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումը ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20000 ՀՀ դրամ.
3. ճարատարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20000 ՀՀ դրամ.
4. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 ՀՀ դրամ.
5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 ՀՀ դրամ.
6. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս աղբահանության վճարը սահմանվում է՝

1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ քաղաքային բնակավայրերում ամսական 200 ՀՀ դրամ, գյուղական բնակավայրերում ամսական 100 ՀՀ դրամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 ՀՀ դրամ:

2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 ՀՀ դրամ.

բ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 Հայաստանի Հանրապետության դրամ.

գ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 ՀՀ դրամ.

դ. գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 ՀՀ դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 ՀՀ դրամ.

ե. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 ՀՀ դրամ.

զ. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 6-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>>-ից <<զ>> պարբերություններով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 6-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>>-ից <<զ>> պարբերություններով սահմանված դրույքաչափով.

է. շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 6-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>>-ից <<զ>> պարբերություններով սահմանված դրույքաչափով:

ը. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 ՀՀ դրամ:

թ. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային

սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

3) Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ 6-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>>-ից <<զ>> պարբերություններով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 ՀՀ դրամ, կամ
- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 ՀՀ դրամ:

-ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

4) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար վճարների դրույքաչափերը սահմանում համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից սույն որոշման 6-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հաշվարկվելիք դրույքաչափերի 20 տոկոսի չափով:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 25 ՀՀ դրամ:

8. Համայնքի կողմից խմելու ջրի մատակարարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ 1 բնակչի համար ամսեկան մեկ շնչի համար՝ 250 դրամ կամ 1 խ.մ. 130 դրամ:

9. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար՝ ամսական 7000 ՀՀ դրամ.

10.Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ ամսական 3000 ՀՀ դրամ.

11. «Մեծամոր համայնքի մարզադպրոց» ՀՈԱԿ-ում ուսուցանող սանի համար՝ ամսական 2000 դրամ:

12.Համայնքը սպասարկող անասնաբույժների ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով՝ 0 ՀՀ դրամ:

13. Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ 3000 ՀՀ դրամ, քաղաքային բնակավայրի համար՝ 10000 դրամ:

Աշխատակազմի ղեկավար՝ **Մ. Հովհաննիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2026 թվականի N 245-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով , հիմք ընդունելով Նարեկ Սերգեյի Խաչատրյանի 2026 թվականի նոյեմբերի 12-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն՝ Նարեկ Սերգեյի Խաչատրյանին 2026 թվականի նոյեմբերի 16-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Մեծամորի Ջրամատակարարում» համայնքային հիմնարկի տնօրենի պաշտոնում նշանակելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ԱՇՈՏ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ

ՆԱՀԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՍՆՋՈՅԱՆ

ՏԱՏՅԱՆԱ ԴՈԲՈՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՋԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՂԻՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի նոյեմբերի 13
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2026 թվականի N 246-Ա

0,025 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N828-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներով և հիմք ընդունելով Էդիկ Անդրանիկի Ղազարյանի դիմումը, ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 6-րդ փողոց 17/1 հողամաս հասցեում գտնվող՝ Էդիկ Անդրանիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 0,025 հա /կադաստրային ծածկագիր 04-075-0070-0009/ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողատեսքը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2.Փոփոխված 0,025 հա հողամասն արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ԱՇՈՏ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ

ՆԱՀԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՄՆՋՈՅԱՆ

ՏԱՏՅԱՆԱ ԴՈԲՈՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՋԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՂԻՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի նոյեմբերի 13
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2026 թվականի N 247-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2026 թվականի երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել՝ 2026 թվականի դեկտեմբերի 11-ին, ժամը՝ 16:00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ԱՇՈՏ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ

ՆԱՀԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՍՆՋՈՅԱՆ

ՏԱՏՅԱՆԱ ԴՈԲՈՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՋԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՂԻՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի նոյեմբերի 13
ք.Մեծամոր